# ԲԱՄԲԱԿԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրկոմկուսի (բ) կենտկոմի
բյուրոյի բանաձևը
1931 թ. մայիսի 21-ին

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

633.5
Ա-21

ԱԶԵՐՆԵՇՐ
ԲԱԳՈՒ—1931

17 SEP 2013

633.5
Ц-21

24 SEP 2013

С 39-К
266

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ԲԱՄԲԱԿԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի բանաձևը
1931 թ. մայիսի 21-ին

AZƏRNƏŞR

Բաքու—1931

19.107

61923-67

AZƏRNƏŞR mətвəəsində вasьldь Baqь, Balşoj Marskoj və Krasno-Presnensqi quçələrin tınində № 16/36
Baş Mətвyat Mudirliqi 3697 Sifariş 481 Sajь 500 Statəleu –ꞔ 6

# ԲԱՄԲԱԿԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի բանաձևը
1931 թ. մայիսի 21-ին

*Ձնայած ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Միութենական կառավարության հաստատած 205 հազար հեկտար բամբակի պլանի իրական լինելու մասին յեղած՝ օպորտունիստական անհավատության, ռայոնական կազմակերպությունների դեպի բամբակի համար մղվող պայքարը շրջվելու և ցանքսի ընթացքը ղեկավարելում գործառնակության հիման վրա՝ Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունն Անդրյերկրկոմի ղեկավարությամբ կարողացել ե իրականացնել բամբակացանի պլանի գերակատարումը (մինչև մայիսի 25-ը ցանված ե 214,849 հեկտար—պլանի 104,8%-ը. հիմնականում ցանքսն ավարտված ե մի ամիս առաջ՝ անցյալ տարվա համեմատությամբ, (ցանված ե 80% ավելի տարածություն քան թե անցյալ տարի)։*

*Անցյալ տարվա համեմատությամբ բամբակացանի համարյա կրկնակի պլանի գերակատարումը պայմանավորված ե յեղել կուլակին վճռական հարված հասցնելով և կոլխոզային շինարարության հզոր թափով (բամբակային ռայոններում կոլեկտիվացումը*

տնտեսությունների 53,7%-ը, կոլխոզները ցանել են ամբողջ բամբակային տարածության 65,1%-ը և կատարված է կոլխոզային սեկտորի ցանքսի սկզբնական պլանի 134,6%)ը, խոշոր բամբակային սովխոզների կազմակերպությամբ և նրանց պլանը գերակատարելով (18,239 հեկտար՝ անջրդիի հետ միասին, սկզբնական պլանի—14,500 հեկտարի դիմաց), ամբողջ համայնացրած սեկտորի աճումով, որ նշանակում է, թե Խորհ. Ադրբեջանի բամբակաբուծությունը փաստորեն հիմնական մասում անցել է խոշոր տնտեսության ռելսների վրա (ամբողջ բամբակային տարածության 70,2%-ը ցանել են սովխոզներն ու կոլխոզները)։

Դրա հետ միասին Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը նախազգուշացնում է վորոշ տեղեր յերևան յեկող թերագնահատման դեմ՝ անհատական սեկտորի վերաբերմամբ, վորը դեռևս բավական աչքի ընկնող տեսակարար կշիռ ունի Ադրբեջանի բամբակային ռայոններում (տնտեսությունների 44%-ը, ամբողջ բամբակային տարածության 27,3%-ը)։

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը 1931 թվի բամբակացանի նախապատրաստման հետևյալ հիմնական ցուցանիշներն է մատնանշում՝ 1930 թվի համեմատությամբ.—

1) Բամբակի պայմանագրման պլանը կատարված է 101,8%-ով և ավարտված է ապրիլի 25-ին, այսինքն համարյա մի ամիս առաջ անցյալ տարվանից։

2) Ջրային սիստեմների ավելի ժամանակին պատրաստելու հետևանքով նախացանքային վոռոգումը [illegible]ականում (82%) ավարտվել է մինչև մայիսի 5-ը։

AZƏRN...
Bas Mətəvat

3) Բամբակային հողակտորները հիմնական ռայոններում դարձված են բամբակային ամբողջական հողամասեր (մասսիվներ), վոր պետք է կարևորագույն նվաճում, կոլեկտիվացման հիմքերից մեկը համարել, վորն ապահովում է տարածությունների նպատակահարմար ոգտագործումը բամբակի համար, նրանց վոռոգումը, արածացնելուց պաշտպանելն ու բերքահավաքը, նույնպես և հացահատիկային մշակույթների դուրս մղումը։ Դրա հետ միասին, բացի առանձին բացառություններից (Նախչըջան, Գյոգչա), հիմնականում իրագործված է այն տարածությունների կրկնավարը, վոր նշանակված են յեղել բամբակի համար, բայց հացահատիկ է ցանվել (կրկնավար է արված 6,430 հեկտար)։

4) Ցել է արված 80 հազար հեկտար տարածության վրա (պլանի 120%), անցյալ տարվա 30,000 հեկտարի դիմաց։

5) Հերկած տարածությունների գործիքային չափումը թույլ է տվել ժամանակին նախազգուշական միջոցներ ձեռք առնել (պակասը հերկել) այն պակասի դեմ, վոր յեղել է պայմանագրված տարածության և փաստորեն վարածի միջև, մի բան, վոր անցյալ տարիները հսկայական չափերի եր հասնում (1930 թվին 25 հազար հեկտար)։

6) Ռայոնների և Հողժողկոմատի տվյալների համաձայն ամբողջ ցանված տարածության 94,2% շարքացան է արված, վորը՝ վաղ ցանելու հետ միասին՝ վճռական նշանակություն ունի բերքատվությունը բարձրացնելու համար։

7) Կազմակերպված է 13 նոր մեքենա-տրակտորային կայան (ի լրացումն ունեցած 2-ի՝, վորոնք

թեկուզ բավականաչափ կազմակերպված չեն յեղել, այնուամենայնիվ աչքի ընկնող հաջողություն են ապահովել բամբակաբուծության տեխնիկական վերազինման գործում, կոլխոզային շինարարության համար տեխնիկական բազա ստեղծելով և կոլխոզներում կատարելագործված ագրո-տեխնիկական ձևեր արմատացնելով։

Չնայած, վոր տրակտորային հերկի պլանը աչքի ընկնող չափով թերակատարված է, այնուամենայնիվ հերկի պլանը գերակատարված է շնորհիվ ռայոնների ունեցած ամբողջ քարշաուժն մոբիլիզացիայի յենթարկելուն և ամենամեծ չափով ոգտագործելուն։

Կենտկոմն առանձնապես նշում է Բագվի պրոլետարիատի ոգնությունը բամբակային կամպանիան տանելու գործում և ցանքսի ժամանակ լայնորեն զարգացած՝ առաջավոր գյուղերի, կոլխոզների, սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և ռայոնների սոցիալիստական բուքսիրը հետ մնացողների վերաբերմամբ. այդ բանը տնտեսականի հետ միասին ահագին քաղաքական դեր է խաղացել կոլխոզնիկների դաստիարակության և կազմակերպման գործում՝ սոցմրցման և փոխադարձ ոգնության սկզբունքներով։

Բուքսիրի նշանակության թերագնահատումը վորոշ ռայոններում (Աղդաշ) սոցմրցման և հարվածայնության դերն անհասկանալու արտահայտությունն է հանդիսանում, նույնպես և այն բանի անհասկանալու, թե ինչ հսկայական կազմակերպող և դաստիարակող բնույթ ունին կոլխոզնիկների, ռայոնական ակտիվի և մեքենա-տրակտորային կայանների գործիչների



յերթերը մյուս գյուղերն ու ռայոնները՝ հետամնացներին ոգնելու համար։

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը համարում է, վոր սոցբուքսիրը, սոցմրցությունը և հարվածայնությունը՝ գործարքայինը կոլխոզների բոլոր գյուղատնտեսական աշխատանքներում արմատացնելու հետ միասին՝ պետք է լայնորեն ծավալել մշակման և բերքահավաքի ամբողջ ժամանակաշրջանում։

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը միաժամանակ ընդգծում է, վոր ցանքսի ընթացքը յերևան է բերել մի շարք խոշոր թերություններ և թուլություններ՝ բամբակային կամպանիան տանելիս.—

1) Ադրբեջանի բամբակաբուծության հիմնական ռայոն Մուղանը ցանքսն ուշ է վերջացրել (Սաբիր Աբադ, Կարագանլի)։ Այդ հետ մնալը հիմնականում կապված է այն բանի հետ, վոր ռայոնական կազմակերպությունները վոռոգման կամպանիան վատ են նախապատրաստել և անբավարար տարել, չեն կարողացել վոռոգման կազմակերպմանը տիրապետել և տեխնիկորեն ճիշտ մոտենալ, իսկ դա, Մուղանի առանձնահատուկ պայմաններում բացառիկ նշանակություն ունի (այս տարի, անձրևային գարնան պայմաններում շարունակել են գիշատողական ջրոգտագործումը, վորն առաջ է բերել ջրի չափից ավելի գործադրություն, գերվոռոգում, արաթից դուրս գալըն ուշացրել և տարածություններն աղիացրել են)։

2) Մի շարք ռայոններում հարկավոր չափով չեն ապահովել բամբակային մասսիվներ առանձնացնելը,—վորը բամբակաբուծության վճռական խնդիրներից մեկն է, -մանավանդ Գյոգչայում, ուր դա ավելի լուրջ խնդիր է ներկայացնում։

3) Կան մի շարք թերություններ ցանքը կատարելու գործում, որ կարող են բացասաբար ազդել բամբակի բերքատվության վրա. այդ թերություններն են՝ ձմերային արաթի պլանի չկատարելը (36,5%), պարարտացման պլանի չկատարելը (82,5%), մի շարք տեղերում հերկի վատ վորակը, տրակտորային մշակման պլանների չկատարելը, տեղ-տեղ շաղացան կատարելը։

4) Մեքենա-տրակտորային կայանների մեծ մասը գործել է անբավարար (տրակտորային մշակման պլանի չկատարելը, տրակտորների պրոստոյները, մեքենաների վոչ լրիվ բեռնավորումը, վառելիքի մեծ ծախսումը, ապարատի աղտոտվածությունը խորթ տարրերով և բնիկների անբավարար ներգրավումը). այդ բանը կապված է ռայոնական, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից մեքենատրակտորային կայաններին հասցրած օգնության անբավարարության հետ և մի շարք դեպքերում՝ նրանց նշանակության, վորպես բամբակաբուծության և կոլլեկտիվացման հիմնական բազայի, թերագնահատման հետ։

Ցանքսն անցկացնելու ընթացքում մի շարք փաստեր են յերևան բերվել, յերբ մասսայական աշխատանքի տեղ յեղել է միայն վարչավորում, յերբ կոլխոզնիկները, բատրակները և չքավորա-միջակային մասսաները բավարար կերպով չեն կազմակերպվել հարված հասցնելու կուլակին.—վորը կատաղի ընդդիմադրություն է կազմակերպում բամբակի և կոլլեկտիվացման դեմ,—նույնպես և հարվածելու կոլխոզային շինարարության ծռումներն ու թուլությունները («ձախ» ծռումների կրկնությունները՝ առանձին ռայոններում կոլլեկտիվացման թվերի հետևից ընկնելը, աջ-օպորտունիստական հուսադրումն ինքնահոսի վրա, կոլխոզների կազմակերպչական-տընտեսական ամրապնդման հարցերի արհամարումը, գործարքայինի թույլ իրագործումը և կոլխոզների մեջ խորթ տարրեր խցկվելը և այլն)։

Կուսակցության գծի այդ ծռումներին օբյեկտիվորեն նպաստել են այն քաղաքական սխալները, վոր թույլ են տվել Խորհ. Ադրբեջանի կոլխոզային կոոպերատիվ սիստեմն ու Հողժողկոմատը. այդ քաղաքական սխալներն արտահայտվել են նրանով, վոր ռայոններին են հասցրվել (ռայոններն ել, տեղ-տեղ, գյուղերին են հասցրել) տնտեսությունների կոլլեկտիվացման վերևում սահմանված չափեր և կուլակային ունևոր տնտեսությունների յերևան բերելու տոկոսներ։

Կոլխոզային շինարարության հաջողությունները և առողջ աճումը ձեռք է բերվել շնորհիվ այն բանի, վոր Խորհ. Ադրբեջանի կուսկազմակերպությունը ժամանակին ուղղել է այդ սխալները և մի շարք տեղերում կանխել է տեղի ունենալիք ծռումները։

Ադրկոմկուսի (բ) կենտկոմը վճռականորեն նախազգուշացնում է բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին օպորտունիստական տրամադրություններից, դեմոբիլիզացիայից, հանգստանալուց՝ ցանքսի պլանը հաջողությամբ կատարելու առթիվ։ Բերքատվությունը կրկնապատկելու (միջին հաշվով մի հեկտարից 8,5 ցենտներ) և 171 հազար 893 տոնն չզտած-բամբակի քաղն ապահովելու խնդիրը պահանջում է, վոր ամբողջ ակտիվն անհապաղ պայքարի լծվի վորակական ցուցանիշների,

բամբակի մշակման համար՝ բոլոր յեղած բանվորական ուժն ուղիղ կազմակերպելու և դասավորելու հիման վրա ու մոբիլիզացիայի յենթարկելու կոլխոզային, բատրակային և չքավոր-միջակային մասսաները՝ կուլակի դեմ տարվելիք կռվի համար։

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմն անհրաժեշտ է համարում.—

1. Հաստատել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի քարտուղարության վորոշումը՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի բամբակի մշակման մասին սույն տարվա մայիսի 12-ի վորոշումն իրագործելու մասին։

2. Առաջարկել ցանքային կոմիսիային անհապաղ նախապատրաստություն ծավալել 2-րդ վոռոգման համար, ապահովել ջրելու համար սահմանված նորմաների վերանայումը՝ կրճատելու և ջրելն իրոք ռացիոնալացնելու նպատակով (գիշերվա վոռոգում, կանխել ջրի ավել գործադրությունը), և 3 որվա ընթացքում տեղերին հրահանգներ տալ՝ նախացանքային արաթի սխալները կանխելու նպատակով։ Հունիսի 5-ից վոչ ուշ ավարտել բոլոր ջրմուղների ստուգումը, անհրաժեշտ նորոգումն ու վերականգնելու աշխատանքները կատարելու համար։

Կենտկոմի բյուրոյի մոտավոր նիստում դնել Ադվոդխոզի զեկուցումը և Ադրբանգյուղտեխչության կից զեկուցումը՝ առաջին վոռոգումը նախապատրաստելու մասին։

Առաջարկել բոլոր գործարաններին, վորոնք կատարում են Ադվոդխոզի պատվերները, դիրեկտորների, բջիջների քարտուղարների և ֆաբգործտեղկոմների նախագահների անձնական պատասխանատվությամբ, ապահովելու պատվերների կատարումը նշանակած ժամկետներին և աշխատանքների անհրաժեշտ վորակը։

3. Ինկատի առնելով հացահատիկային մշակույթների հնձի մոտենալը՝ առաջարկել Հողժողկոմատին և գյուղատնտեսական կոոպերացիային, վոր ապահովեն բամբակային ռայոններում հացահատիկային մշակույթների հունձն ամենակարճ ժամկետներում, առաջին հերթին այդ ռայոններն ուղարկելով հնձող մեքենաներն ու կազմակերպելով հունձը մեքենա-տրակտորային կայանների միջոցով։

Հանձնարարել Հողժողկոմատին, ընկ. Մ. Կասումովի պատասխանատվությամբ, Բանգյուղտեխչության ժողկոմատի հետ միասին՝ Ադրբեջանում յեղած բոլոր բերքահավաքի մեքենաները կենտրոնացնելու բամբակային ռայոնների մեքենատրակտորային կայանների տրամադրության տակ։ Բամբակային ռայոններում հունձը վերջացնելուց հետո ազատվող գյուղատնտեսական ինվենտարը և մեքենաները տանել հացահատիկային ռայոնները։

Լեռնային շրջանի ռայոնների բուքսիր կազմակերպել, վորպեսզի ամենամեծ չափով արագացվի բամբակային ռայոններում հացահատիկային կուլտուրաների հունձը և հացամթերումների կատարումը։

Հանձնարարել Կենտկոմի քարտուղարությանը, վոր ռայկոմներին համապատասխան հրահանգներ տա։

4. Անհրաժեշտ համարելով տրակտորների անդիմությունն արմատապես վերացնելն, առաջարկել բոլոր մեքենա-տրակտորային կայաններին, վոր տրակտորային պարկերի աշխատանքն ապահովեն վորակ-

յալ տրակտորիստների մշտական կադրերով, գլխավորապես տեղական կոլխոզնիկներից։

Բացի այդ, ամեն մի մեքենա-տրակտորային կայանի ռայոնում առանձին հաշվեառի վերցնել բոլոր տրակտոր բանեցնել իմացողներին, աշխատելով նրանց վորակավորումը բարձրացնել, վորպեսզի առանձնապես լարված մոմենտներում նրանց գործ տրվի մեքենա-տրակտորային կայաններում՝ համաձայն սահմանված տարիֆների, գործավարձի սկզբունքով։

Տրակտորիստների կադրերի ամրապնդման հարցը դնել ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմում և Խորհրդային Միության Հողժողկոմատում։

5. Հանձնարարել Կենտկոմի քարտուղարությանը, վոր լսի Ադրպրոֆխորհրդի և Բագշեֆխորհրդի զեկուցումը՝ բամբակային ռայոնների և կոլխոզների վրա ձեռնարկների շեֆության մասին։

Անհրաժեշտ համարել, վոր խոշոր մեքենագործարանները և յերկաթուղային արհեստանոցները շեֆության կարգով ամրապնդվեն մեքենատրակտորային կայաններին։

6. Պարտավորեցնել կուսակցության ռայկոմներին, վոր մեքենա-տրակտորային կայանների աշխատանքը շրջապատեն ռայոնի ամբողջ կուսակցական-խորհրդային հասարակայնության ամենամեծ աջակցությամբ, ոգնելով միավորությունն անցկացնելուն, և ռայկոմների բյուրոների մոտավոր նիստերից մեկում քննել մեքենա-տրակտորային կայանների արտադրական պլանը։

7. Առաջարկել Կենտկոմի Կուլտպրոպին և Լուսժողկոմատին ուսուցիչների վերապատրաստությունն



այս տարի անցկացնել կոլեկտիվացման խնդիրների, հատկապես կոլխոզներում գործարքայինն արմատացնելու և ուսուցիչների կողմից կոլեկտիվացմանն ակտիվ ոգնելու նշանի տակ։

Բանգյուղտեսչությունը պետք է չթուլացնի հսկողությունը, թե ինչպես են կատարվում ուսուցչական համագումարի վորոշումները և Խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի դեկրետը՝ ուսուցիչների դրության մասին։

8. Կենտկոմի անունից հատուկ հրահանգ ուղարկել կուսակցության ռայկոմներին՝ կոլխոզային շինարարության հերթական հարցերի մասին՝ կուլակության դեմ պայքարելու, կոլխոզներն ամրապնդելու, գործարքայինն անց կացնելու, աշխատանքի կազմակերպության և յեկամուտներն ուղիղ բաժանելու մասին։

9. Հանձնարարել Բանգյուղտեսչությանը սիստեմատիկ հսկողություն ունենալու, թե ինչպես են կատարվում կառավարության վորոշումները՝ քոչվորներին բամբակային ռայոններում ամրապնդելու և անասունները համայնորեն արածացնելը կազմակերպելու մասին ու գործառնական կարգով ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները։

Նախազգուշացնել Առողջժողկոմ ընկ. Կադիրլուն և Լուսժողկոմ ընկ. Մաքսուդ Մամեդովին, վոր այդ հարցի մասին Ադրկենտգործկոմի և կատարման հանձնաժողովի վորոշումների ժամանակին չկատարելը կըհամարվի վորպես նրանց կողմից բամբակային կամպանիայի խախտում և կուսակցության մարտական հրահանգների չիրագործում։

Առաջարկել Ժողկոմխորհին մինչև ընկ. Բունյաթզադեյի Մոսկվա մեկնելն ապահովել անհրաժեշտ հատկացումները, վոր կապված են այս միջոցառումների հետ։

10. Առաջարկել Մատակարարման ժողկոմատին և Ազերիտտիֆակին, ընկ. ընկ. Իսկենդեր Ալիյեվի և Հաշիմովի անձնական պատասխանատվությամբ, բամբակային ռայոններն ուղարկելու անհրաժեշտ քանակությամբ շաքար և թեյ։

Հանձնարարել անձամբ ընկ. Բոգդանովին՝ ապահովելու այս վորոշման կատարման ստուգումը։

Հանձնարարել Բանգյուղտեսչությանը ստուգելու, թե Ազերիտտիֆակն ինչպես է կատարում բամբակային սովխոզների մատակարարման պլանը և, անհրաժեշտ միջոցները ձեռք առնելով, տասնօրյա ժամկետում հաղորդել Կենտկոմի քարտուղարությանը։

11. Ցանքային հանձնաժողովները, ռայգործկոմները և կուսակցության ռայկոմները պետք է անհապաղ կազմակերպեն բամբակ ցանած տարածությունների ստուգումը ծիլերով, բոլոր ռայոններում, սահմանելով ժամկետներն ըստ ռայոնների։

12. Առաջարկել Հողժողկոմատին, Անդրխլոպկոմի հետ միասին, տասն օրվա ընթացքում բամբակի բերքի համար պահեստների հարցը մշակելու և Ժողկոմխորհի հաստատմանը ներկայացնելու։

13. Հենց հիմա ծավալել 1932 թվի կամպանիայի նոր պլանի մշակումը և ձեռնարկել նախապատրաստական աշխատանքներին։ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի մոտակա նիստում լսել Պետպլանի՝



Հողժողկոմատի, Ազվողխոզի և Կոլխոզցենտրի զեկուցումը՝ 1932 թվի բամբակային կամպանիայի մասին։

14. Քարտուղարությանը հանձնարարել ամեն մի բամբակային ռայոնին ամրացնելու՝ մինչև բերքահավաքի կամպանիայի վերջը՝ մի խումբ պատասխանատու ղեկավար գործիչներ՝ գլուխ ունենալով Կենտկոմի բյուրոյի կամ կառավարության անդամներին։

15. Ցուցմունքներ տալ բոլոր կազմակերպություններին և թերթերին՝ բոլոր ուժերը գումարելու վորակական ցուցանիշների կատարման շուրջը, այդ ցուցանիշները համարելով տվյալ ժամանակաշրջանի հիմնական լոզունգները (8,5 ցենտներ մի հեկտարից միջին հաշվով հանրապետությունում, 171,893 տոնն հնդավոր բամբակ, 4 քաղհան, գիշերային վոռոգումներ և այլն)։ Կենտկոմի և Ժողկոմխորհի անունից տեղերին տալ այդ լոզունգները՝ կոնկրետ կերպով ամեն մի ռայոնին, թվելով վորակական ցուցանիշները։

16. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմն առանձնապես մատնանշում է կուսակցության ռայոնական կոմիտեների, ռայոնական ակտիվի, մեքենա-տրակտորային կայանների, կոլխոզնիկների, Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի լիազորների անձնազոհ աշխատանքը, վորոնք ապահովել են ցանքսի բոլշևիկյան տեմպերը հետևյալ ռայոններում և բամբակային սովխոզներում՝ Շամխորի, Գյանջայի, Թաուզի, Կասում-Իսմայլովի, Բարդայի, Սալյանի ռայոններում ու Միլի և Կարա-Ջալայի սովխոզներում։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը հավատացած է, վոր ներկա վորոշումը Խորհ. Ադրբեջանի ռայոնների, մեքենա-տրակտորային կայանների և կոլխոզների սոցմրցման նոր ազդակ կհանդիսանա՝ բերքի և 1931 թվի բամբակաքաղի վերջնական արդյունքների համար մղվող պայքարում։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀՀ Ազգային գրադարան
NL0280662

19. 107

CA 32-K / 266

Գինն ե 15 կ.

# A. S. Ş. C-də PAMBYK ƏQINLƏRININ JEQYNLARЬ HAKKЬNDA

(A. K. (b) F. M. K. burosynyn 1931-ci il 21 maj tarixli kərarь).

AZƏRNƏŞR

Baqь — 1931